Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

քաղաքացիների ընդունելության և դիմումների, բողոքների ու
առաջարկությունների վերաբերյալ
14.10.2011թ. դրությամբ

1. Ստացվել են նամակներ ընդամենը՝ **5797**
որից՝

	ԹՎԱՔԱՆԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
առաջարկություն	720	12.4
դիմում	4038	69.6
բողոք	1039	17.9
կրկնակի	365	6.2
կոլեկտիվ	12	0.2

2. Վերցված է վերահսկողության ընդամենը՝590

	ԹՎԱՔԱՆԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
դիմում	472	8.1
բողոք	118	2.1

3. Ըստ հարցերի բնույթի

	ԹՎԱՔԱՆԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
բնակարանային	264	4.5
կոմունալ-կենցաղային	19	0.3
շինարարական	47	0.8
արդձեռ (տրանսկապ)		
գյուղատնտեսական	31	0.5
բնութ. պահպանութ.		
առևտրի		
կենսաթոշակային	80	1.3
առողջապահության	13	0.2
կրթական և մանկ. հիմն.		
գիտութ. կուլտուրա		
ֆինանսական	2128	36.7
օրենսդրական	136	2.3
քաղ. և որդեգրման հաշվառման		
աշխ. և աշխատավարձի	299	5.1
ապարատային		

այլ հարցեր	2766	47.7
սեփականաշնորհում	14	0.2

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

2011Թ. ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ, ԲՈՂՈՔՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ստացված 5797 նամակներից մոտ 17.9%-ը եղել են առաջարկություններ, որոնք հիմնականում վերաբերել են ֆինանսական հարցերին: Բողոքները կազմել են շուրջ 17.9%, որոնցով հիմնականում վիճարկվել են դատական ակտի հիմնավորվածությունը: Միաժամանակ, դրանց մի մասը բովանդակել է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդություն:

Նշված նամակներից մոտ 69.6%-ը տարաբնույթ հարցերով դիմումներ են, որոնց գերակշռող մասը՝ մոտ 36.7%-ն վերաբերում է ֆինանսական, իսկ 5.1%-ն՝ աշխատանքի և աշխատավարձի հարցերին: Ընդ որում՝ ֆինանսական հարցերին վերաբերող դիմումները տարրանջատվում են՝

- դիմումատուների կողմից դատարան ներկայացրած գումարների պահանջների վերաբերյալ դիմումների (որոնք հիմնական մասն են կազմում).
- դատարան դիմելիս պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ դիմումների:

Դիմումատուները դատական ակտի հետ չհամաձայնվելով, իրենց դիմումները հղել են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը՝ խնդրելով աջակցել իրենց դատարանում ներկայացրած պահանջների վերաբերյալ արդար դատական ակտ կայացնելու կամ պետական տուրքից ազատելու հարցերով: Դիմումներին պատասխանվել է, որ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը նման հարցերին միջամտելու, ինչպես նաև վարչական կարգով պետական տուրքից ազատելու իրավասությամբ օժտված չէ, որ նման վեճերի քննարկման իրավասությունն օրենքով վերապահված է դատարաններին: Դիմումների որոշ մասը՝ 4.5%-ը առնչվում է բնակարանային, 0.3%-ը կոմունալ-կենցաղային, 0.8%-ը շինարարական, հողային վեճերի վերաբերյալ հարցերին:

Իսկ մնացած՝ մոտ 47.7%-ը դիմումները վերաբերում են տարբեր ոլորտներին առընչվող խնդիրներին, որոնց կապակցությամբ ուղարկվել են օրենքով սահմանված սպառիչ պատասխաններ ու տրվել պարզաբանումներ:

Հայտնում ենք, որ ստացված դիմումներից 5577-ին տրվել է գրավոր, իսկ 150-ին՝ բանավոր պատասխան: Ամփոփումների արդյունքներով տեղեկանքը կազմելու պահին 70-ի քննարկումը դեռ ընթացքի մեջ է:

Աշխատակազմի քարտուղարություն